յարակից չէնքերով. ընդարձակ է վանքը և ունի կալուածներ ու հողեր։ (Ս. Գէորգ վանքի պատմութիւնը և նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. էջ 318-328)։

Լիդի աւանդութիւնները. — Առաքելական քարոզութեան սկիզբէն՝ Լիւդ ունէր քրիստոնեաներ։ Ս. Պետրոս օր մը հոն գնաց «տեսնելու համար հաւատացեալները» և այս առիթով հրաշքով մը բժշկեց Ենեան որ ութը տարիներէ ի վեր անդամալոյծ էր։ «Եւ անոնք որ կը բնակէին Լիւդ և Սարոն տեսան զանիկա և հաւատացին ի Տէր» (Գործք. Թ. 32-35)։ Հոն էր որ Ս. Պետրոս ընդունեց այն լուրը որ չտապով զինքը Ցոպպէ կը հրաւիրէր՝ ուր Տաբիդան վախճանած էր։

Երբ քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակուեցաւ Կոստանդիանոսի օրով, Լիւդ ունեցաւ եպիսկոպոսական աթոռ։ 325ի Նիկիոյ ժողովին ներկայ եղող եպիսկոպոսներու ցանկին վրայ կը տեսնուի Լիւդի Այիտիոս եպիսկոպոսին անունը։ 415ին Լիւդի մէջ գումարուեցաւ սինոդ մը՝ ուր ներկայ եղան 14 եպիսկոպոսներ դատելու համար Պելագոսը։

Լիւդի եկեղեցին նուիրուած է Կապադովկիացի Ս. Գէորգ փառաւոր վկային։ Տեղական աւանդութեան համաձայն որ կը տևէ մինչև Զ. դար, Ս. Գէորգ ծագումով Լիւդացի էր, և իր նշխարները Նիկոմիդիայէն բերուեցան իր ծննդավայրը։ Սակայն Կեսարացի Եւսեբիոս 322ին կը պատմէ մարտիրոսութիւնը ազնուատոհմ զինուորին որ հաւատաց Քրիստոսի Նիկոմիդիոյ մէջ Դիոկղետիանոսի առջև 303ին, բայց չի տար սուրբին անունը և չի խօսիր անոր ծընընդավայրին և ոչ ալ իր գերեզմանին տեղւոյն մա-